«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 5
29.12.2021թ.

1. 2021թ-ի ընթացքում ՀԱԱՀ-ի գործունեության ամփոփ հաշվետվության վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

2. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի ամբիոններում ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակի և խնդիրների վերաբերյալ.

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Գիտական խորհուրդը լսելով և քննարկելով «ՈՒսումնական գործընթացի վիճակը և խնդիրները Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի ամբիոններում» հարցը արձանագրում է, որ ֆակուլտետի ամբիոններում մեծ ծավալի աշխատանքներ են տարվում կրթական, գիտահետազոտական, խորհրդատվական, ենթակառուցվածքների զարգացման, կրթական բարեփոխումների, մասնագիտական կողմնորոշման և այլ ուղղություններով:

Այնուհանդերձ ֆակուլտետում դեռևս խնդիրներ կան դասախոսական կազմի հետազոտական գործունեության ակտիվացման, գիտական արդյունքների ներդրման և ապրանքայնացման, հետազոտական արդյունքները կրթական ծրագրերում ներառելու, ուսանողական համակազմի պատշաճ համալրման և ֆակուլտետի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) հավաքման և դրանց արդյունքների վերլուծության ուղղություններով:

Ելնելով վերը նշվածից Գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

2.1. Հաստատել ՀԱԱՀ պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում ուսումնական գործընթացի բարելավման և առկա խնդիրների լուծման վերաբերյալ որոշման նախագիծը:

2.2. Հանձնարարել դեկանի պարտականությունները կատարող Ս. Դավեյանին.

- Կարիերայի զարգացման և շարունակական կրթության բաժնի և ամբիոնի վարիչների հետ համատեղ, դիմորդների շրջանում շարունակական աշխատանքներ տանել մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ:
- Ամբիոնի վարիչների հետ համատեղ շարունակական աշխատանքներ տանել աշխատաշուկայի համապատասխան ոլորտի կազմակերպությունների հետ համագործակցության հաստատման և պայմանագրերի կամ հուշագրերի ստորագրման ուղղություններով:

- Ամբիոնի վարիչների հետ համատեղ, մինչև 2022 թվականի մարտի 1-ը, սահմանված ձևաչափին համապատասխան ներկայացնել ֆակուլտետի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները և դրանց վերլուծության արդյունքները:

- Որակի գնահատման և ապահովման կենտրոնի հետ համատեղ շարունակական աշխատանքներ տանել ֆակուլտետում իրականացվող կրթական ծրագրերի, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի վերանայման ու բարելավման ուղղությամբ:

2.3. Հանձնարարել ՊՏ ֆակուլտետի կազմում գործող ամբիոնի վարիչներին.

- Աշխատանքներ տանել դասախոսական կազմի հետազոտական գործունեության ակտիվացման և հետազոտության արդյունքների ներդրման ու ապրանքայնացման ուղղությամբ:

- Աշխատանքներ տանել հետազոտական արդյունքները կրթական ծրագրերում ներառելու և հետազոտական ծրագրերում ուսանողների լայն ընդգրկվածությունն ապահովելու ուղղությամբ:

- Համագործակցել ֆակուլտետում իրականացվող ծրագրերի պատասխանատուների, մասնագետների հետ՝ նոր մոդելի սարքավորումներ ձեռք բերելու ու լաբորատորիաները վերազինելու նպատակով:

3. ՀԱԱՀ-ի «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն», «Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» և «Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղերի Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծրագրերի շրջանակներում 2021թ թվականին կատարված աշխատանքների հաշվետվությունների հաստատման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց հաստատել ՀԱԱՀ հիմնադրամի «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն», «Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն», «Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղերի տարեկան հաշվետվությունները և երաշխավորել գիտության կոմիտե ներկայացնելու ու հետագա ֆինանսավորման:

4. Ագրոնոմիական ֆակուլտետի Բուսաբուծության և հողագիտության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Կարեն Արթուրի Ղարախանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

4.1. Կարեն Արթուրի Ղարախանյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Հողի մշակության համակարգերի արդյունավետության գնահատումը Հրազդանի տարածաշրջանում աշնանացան ցորենի օրինակով» վերնագրով՝ Զ.01.01

- «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ:

4.2. Թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար հաստատել գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մերուժան Հայկարամի Գալստյանին:

5. Ագրոնոմիական ֆակուլտետի Բուսաբուծության և հողագիտության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Մերի Արտաշեսի Հոխանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

5.1. Մերի Արտաշեսի Հոխանյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Արագած լեռան հարավ-արևելյան դիրքադրության գյուղատնտեսական հողատեսքերի դեգրադացման առկա վիճակը, դրանց մեղմման և կանխարգելման ուղիները» վերնագրով՝ Զ.01.01 - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ:

5.2. Թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար հաստատել գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Ալբերտ Օվկիանոսի Մարկոսյանին:

6. Սյուզաննա Արմենի Մաթևոսյանին Անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոնում որպես հայցորդ ձևակերպելու, թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

6.1. Սյուզաննա Արմենի Մաթևոսյանին ձևակերպել որպես հայցորդ ՀԱԱՀ Անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոնում:

6.2. Սյուզաննա Արմենի Մաթևոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Կլիմայի փոփոխության ազդեցությունը գյուղատնտեսական հողերի բերրիության վրա Կոտայքի մարզի չոր տափաստանային գոտու պայմաններում» վերնագրով՝ Զ.01.01 - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ:

6.2. Թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար հաստատել գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Սուրիկ Ալեքսանի Հունանյանին:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ